



«ՓՈՂ ՏՈՒՆԷՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԵՆՏԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ. ԵՐ. 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1905

ԹԻՒ 12

ՆՆՈՒ ԵՈՐՔԻ ԲԱՐՁՐ ՆԵՆՔԵՐԸ  
 Կը կարգանք թէ Պետրոս տանիքը  
 ելաւ աղօթք ընելու, և գիտե՛ք թէ  
 Աստուածաշնչի ժամանակները շատ  
 կը գործածուէին տանիքները ինչպէս  
 հիմա ա՛լ այս երկրին քանի մը առք  
 կողմերը: Բայց ոչ Պետրոս և ոչ հին  
 ժամանակի ուէ մէկը տասնըհինգ  
 կամ աւելի յարկ ունեցող տան մը  
 գազաթը կ'ելէր: Բայց այս է ինչ որ  
 կ'ըլլայ Նիւ Եորքի մէջ: Եւ քաղաքին  
 քանի մը ճաշարանները ասանկ բարձր  
 տանիքներու վրայ կը գտնուին: Այս  
 պատկերը այս բարձր ճաշարաններէն  
 մէկէն առնուած է: Սնցեալ ամիս  
 թրինթիթի եկեղեցւոյն մէկ պատկերը  
 դրինք: Այս եկեղեցիին դանդակա-  
 տունը պատկերին ձախ կողմին մօտ  
 կ'երևնայ, բայց շատ աչքի չդարնե-  
 իր բոլորաբնի ահագին շէնքերուն  
 քով: Նիւ Եորքի մէջ բարձր շէնք մը  
 կայ որ քսանընը յարկ ունի: Այս  
 բարձր շէնքերուն շատ անգամ, «Եր-  
 կինքը քերող» անունը կը տրուի:  
 Հարկաւ անոնք վերամբարձներ ու-  
 նին, և ամէնէն վերի յարկը կամ  
 տանիքը կարելի է ելլել առանց աշ-  
 խատանքի կամ յոգնելու:

փնտուցի, բայց իմ ուղածս չգտայ:  
 Յետոյ տեսայ տախտակ մը որ կախ-  
 ուած էր վաճառատան մը պատուհա-  
 նին մէջ — «Տղայ մը կ'ուզուի»: Մա-

դուռը և տեսայ թէ անիկա քիչ մը  
 բաց կը մնար, աղէկ չէր գոցուեր.  
 Ղլխարկս ձեռք առած ներս մտայ:  
 Նոյեմբերի ցուրտ օր մըն էր, և խօ-



ՁԵՌԱԿՈՐՄԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՐՏՈՑ  
 Եթէ տղայ մը «մեքենական տա-  
 ղանդ» և գործիքներ գործածելու  
 կարողութիւն ունի, թող շնորհակալ  
 ըլլայ ատոր համար: Բնութեան այս-  
 պիսի ձիրք մը կ'արժէ մշակել: Անիկա  
 յաջողութեան մեծ միջոց է: Այս  
 մասին իր փորձառութիւնը կը պատմէ  
 մարդ մը սապէս.

Երբ տասնըչորս տարեկան էի, կ'ը-  
 սէ, հարկ եղաւ որ դուրս երթամ  
 և շահիմ մեր ընտանիքին ծախքէն  
 ինձի ինկած բաժինը: Շաբաթ մը  
 երկուք բոլորաբնի նայեցայ, գործ

ղերս շտիցի, ճաքէթս խոզանակեցի  
 և ներս մտայ: «Տղայ մը կ'ուզէք»,  
 հարցուցի գրագրին: «Ետևի գրասեն-  
 եակը գնա», ըսաւ գրագիրը: Գացի  
 սենեակի մը առջև, հրեցի և բացի

սելէս առաջ վաճառատան տէրոջ  
 որ գրասեղանի մը վրայ հակած  
 էր, ետ դարձայ դուռը գոց լու-  
 ղուռը սոսկալի ճանչեց երբ հրեցի  
 զանիկա գոցելու համար: Յետոյ տե-

սայ թէ զանիկա կարելի չէր գոցել, քննուեցաւ դուռը և նորէն բացուեցաւ, վասն զի նիզը տեղը չէր նստեր, Ես արհեստէ կը հասկնայի քիչ մը, և անմիջապէս հասկցայ թէ դուռին չգոցուելուն պատճառն ինչ էր: «Ո՛ր սորվեցար դուռեր գոցել», ըսաւ գրասեղանին առջևի մարդը: Արագ մը դարձայ և ըսի, «Տունը, տէր իմ»: «Ի՛նչ կ'ուզէք, նայի՛մ»: «Դուք տղայ մը կ'ուզէք եղեր, ուստի եկայ», պատասխանեցի: «Օ՛», ըսաւ մարդը խապտտ ձայնով մը: Ինք դաժան կ'երևնար, բայց իր համակրալից խօսուածքէն քաջալերուեցայ: «Նստէ, ես հիմա դորձ ունիմ», ըսաւ: Ես ետ նայեցայ դուռին: «Եթէ քիչ մը ձայն ձեզ անհանգիստ չըններ, այդ դուռը պիտի հաստատեմ սպասած միջոցիս», «Շատ աղէկ» ըսաւ մարդը չուտ մը, «ըրէ նայի՛ք»: Այդ առաւօտ իմ չմուշկներս խարտած էի (էյէլէմէք) և իմ գործածած կարճ խարտոցս տակաւին զրպանս էր: Քանի մը վայրկեանէն խարտեցի պղինձ նիզը, այնպէս որ անիկա տեղը նստաւ աղուոր մը: Երկու երեք անգամ բացի գոցեցի դուռը, տեսնելու համար թէ աղէկ էր: Երբ խարտոցը զրպանս զրի և դարձայ, գրասեղանին առջևի մարդը վրաս կը նայէր սչքերը տնկած: «Հայր մայր ունի՞ս», հարցուց: «Մայր ունիմ», պատասխանեցի: «Ժամը երկուքին հոս եկէք մէկտեղ», ըսաւ և նորէն իր գրին սկսաւ:

Երբ քանըհինգ տարեկան եղայ, այդ վաճառատան մէջ գործին բաժանորդ եղայ: Երբ երեսունըհինգ տարեկան եղայ, վաճառատան շահուն կէսին տէրն եղած էի. և ես իմ բարեարդութեանս պատճառը միշտ կը սեպեմ այն տարօրինակ յանձնարարականը զոր այն ատեն քովս ունէի — խարտոցը:

ՏՂԱՅՈՑ ԵՐԳԵԼԸ

Երգելէն քիչ աւելի հաճելի գրադուներ կան, մասնաւորապէս դեռահասակներու համար: Ամէն տղայ կրնայ երգել սորվել: Պիտի ըսուի թէ կը գանուին այնպիսիներ որոնք երաժշտութեան ականջ չունին: Բայց երգել սորվիլը խօսիլ սորվելէն շատ աւելի դիւրին է: Ոմանք ուրիշներէ աւելի դիւրաւ կը սորվին, բայց ընդհանրապէս ամէնն ալ կրնան սորվիլ: Եւ երբ անգամ մը երգել սորվին, պիտի տիրանան հաճոյքի մը որ պիտի մնայ իրենց բոլոր կեանքերուն մէջ:

Երգելը հանդարտ և բարի բնութիւն կը բերէ: Իրաւ որ, մարդիկ պէտք է որ բարեբարոյ ըլլան որպէս զի կարող ըլլան լաւ երգել: Մարդիկ կրնան երգել վիշտի և տառապանքի մէջ, բայց ո՛վ երբեք լսած է մէկուն երգելը բարկութեան կամ վտանգի մէջ: Հրեշտակները կ'երգեն, բայց ո՛վ երբեք երազած է երգող դեմը:

ՍՐԸ ՃՈՐՃ ՈՒՒՆԵՐՄՍ

Հրագիրները նոր պատմեցին մահը Սրբ ճորճ Ուիլերմսի որ Երիտասարդաց Գրիստոնէական Ընկերակցութեան հիմնադիրն եղաւ: Ան մեռաւ Նոյեմբեր 6ին, իր 84երորդ տարիքը լինելուց, ասկէ մէկ ամիսէ պակաս առաջ: Անոր մահուան մէկ ժամուցուսին մէջ ըսուած է թէ պէտք է



անոր տեղ մը տալ կրօնական մեծ մարդասէրներու շարքին մէջ: Ինչպէս են Լորտ Շաֆթիլդըրի և Տր. Պարնարտո, որոնք անոր բարեկամներէն և սքանչացողներէն էին: Երբ ինք տակաւին դեռահաս էր, իր վրայ տպաւորութիւն գործեց զրամաաւուններու և վաճառատուններու երիտասարդ քարտուղարներուն վիճակը, որոնց ընկերային և հոգեկան բարիքին համար բան եղած չէր ոչ անոնց գործատէրներուն և ոչ ունէ ուրիշ մէկու մը ձեռքով: Լոնտոնի մէջ այդ ատեն իր 150,000 զրագիրներ կային: Ան առաջին անգամ աւետարանչական գործ սկսաւ 40 երիտասարդներու մէջ, որոնք իր գործակից ընկերներն էին այն հաստատութեան մէջ ուր ինք կ'աշխատէր, և 1844 Յունիս 6ին տասներկու անձերէ կազմուած ժողովի մը մէջ որոշուեցաւ սկսելու ընկերութիւն մը երիտասարդներու


հոգեւոր զարգացման համար», և այդ ընկերութիւնը անուանել «Երիտասարդաց Գրիստոնէական Ընկերակցութիւն»: Ժողովներուն մէջ տեղի կ'ունենային աղօթք և Աստուածաշունչի ուսում, և միայն եկեղեցւոյ անդամներ կը մտցուէին Ընկերակցութեան մէջ: Այս թերթին մէջ չենք կրնար այնքան տեղ տալ որ պատմենք թէ ինչպէս անցաւ այդ կազմակերպութիւնը: Անիկա ճիւղերուն շատ երկիրներու մէջ, և անցեալ տարուան տեղեկագրին նայելով բոլոր անդամներուն թիւն է 710,000: Մր. Ուիլերմս կը համակրէր Գրիստոնէական գործի ուրիշ շատ ձևերու, վասն զի նախագահ եղաւ այլալընկերութիւններու, և փոխ նախագահ Բրիտանական և Արտաքին Աստուածաշնչի Ընկերութեան: Բարի վիճակով Երիտասարդաց Գրիստոնէական աստիճան շնորհեց: Անոր վերջին հրապարակախօսութիւնը տեղի ունեցաւ այս տարուան Յունիսին, երբ Երիտասարդաց Գրիստոնէական Ընկերակցութիւններու 1,000է աւելի պատուիրակներ ներկայ գտնուեցան 25 տարեք երկիրներէ, իրենց երախտագրութիւնը և սէրը անոր արտայայտելու համար: Սրբ ճորճ Ուիլերմս սապէս ըսաւ անոնց. «Իմ վերջին կտակս է Երիտասարդաց Գրիստոնէական Ընկերակցութիւնը: Սիրելի երիտասարդներ, որ զանազան երկիրներէ եկած էք, ձեզի կը թողում զանիկա, որ յառաջ տանիք և ընդարձակէք:»

ԵՐԿՈՒ ԵՐԵՍՈՎ ԱՂՋԻԿԸ  
Անցեալ օր սա տարօրինակ բանը լսեցի թէ փոքրիկ աղջիկ մը երկու երես ունի: Երբ հագած ըլլայ իր ամէնէն աղուոր հանդերձները, երբ բարեկամներ թէյի կը սպասուին, կամ երբ իր մօրը հետ դուրս կ'ելլէ անիկա այնքան պայծառ, անոյշ և բարի կ'երևնայ, որ պիտի ուզէիք համբուրել զանիկա: Սիրուն ճերմակ զգեստովը, և թերեւ կապոյտ, շողջողուն գօտիովը և գեղեցիկ փոքր կօշիկներովը կ'ակնկալէ թէ իր մօր բարեկամները պիտի ըսեն, «Ի՛նչ սիրուն փոքրիկ է», կամ, «Ի՛նչ անուշիկ երես. մէյմը համբուրեմ»: Եւ այսպէս ան միշտ սիրուն ժպիտ մը ունի իր երեսին վրայ, և Երբ խօսուի իրեն, «Այո, տիկին», «Ո՛յ, տիկին», կ'ըսէ. և «Շնորհակալ եմ», կ'ըսէ շատ անուշիկ կերպով երբ բան մը արուի իրեն:

Բայց գիտէ՞ք, երբ իր մօր հետ մինակ մնայ, և հաւանականութիւն չկենայ թէ այցելուներ պիտի գան, այն ատեն երբեք այն պզտիկ աղջիկը չէ։ Եթէ ուզածը չտրուի իրեն, կամ ուզածը չկրնայ ընել՝ կը խոժոռի, կը ճէ և կու լայ, և մէկը չխորհիր զանիկա համարել։

Ահա կը տեսնէք թէ այո փոքրիկ աղջիկը երկու երես ունի. մէկը կը գործածէ ընկերութեան մէջ և կը հազնի զանիկա ճիշդ իր ազուոր հանդերձներուն պէս. և միւսը կը հազնի երբ տունը մինակ ըլլայ իր մօր հետ։

Կը ճանչնամ պզտիկ աղջիկ մըն ալ, որ միայն մէկ երես ունի, և միշտ անոյ չէ գեղձի պէս, և երբեք աւելի անոյ չըլլար քան երբ տունը գրտնուի և իր մայրը իրեն օգնութեանը պէտք ունի։ Կարծեմ զրեթէ հարկ չէ հարցնել թէ այս փոքր աղջիկներէն որքան աւելի կը սիրէք, և կամ անոնցմէ որո՞ւ պիտի ուզէիք նմանիլ։



**ՍԱՄՈՒ ԿՂՂԻՆԵՐԸ**

Ստիկա կղզիներու ամենէն շահեկան խումբերէն մէկն է փոյինեզիոյ մէջ, երբ միսինարները առաջին անգամ հոն գացին ասկէ իբր յիսուն տարի առաջ, հոն գտան յեղ մը որ քաղաքակրթութեան մէջ գերազանց էր միւս կղզեխումբերուն յեղերէն աւելի։ Մաքուր



էին անձամբ, քաղաքավար՝ իրենց վարմունքով, քաղցր՝ իրենց կիներուն, հոգածու՝ իրենց հիւանդներուն և ծերերուն։ Բնաւ մարդակեր չէին, զերծ էին բիրտ անբարոյակա նութենէ, և կուռք չէին պաշտեր։ Ուստի զիւրաւ ընդունեցին ֆրիստունէութիւնը և հիմա անոնց մէջ բաց ի ֆրիստունէութենէ ուրիշ կրօնք ճանչցուած չէ։ Կղզիներուն ամբողջ բնակիչները 40,000 են միայն, որոնց մեծ մասը Գերմանացոց հպատակ են, և երկու կղզիներ որոնք 6,000 բնակիչ ունին և ամենէն լաւ նաւահանգիստը՝ կղզեխումբերուն մէջ, կը վերաբերին Միացեալ Նահանգներուն։ Հանդերձ չեն հազնիր, բայց միայն ծածկոց մը մէջքէն վար մինչև ծունկերնուն մօտ։ Թէ՛ այրերու և թէ՛ կիներու համար միևնոյն է ասի-

կա։ Այս ծածկոցը կը գործածեն այսպէս առանց գնտասեղներու կամ կոճակներու, և մեծ խնամ կը տանին անոր ծալքերը վայելուչ պահելու։ Սամուացիներուն մորթը գեղինի մօտ թուխ է, և անոնք իրենց մարմինները կը փայլեցնեն քոքօ ընկուզի իւրով՝ անուշահոտութեամբ խառնուած։ Մարմնի վրայ վէտեր (տէօյիւն) ընել շատ հասարակ է այր մարդոց մէջ, և ամուսնանալէ առաջ երիտասարդը իր ընտրած աղջկան անունը այդ կերպով իր մորթին մէջ գծուած կը պահէ։ Անոնք իրենց մազերը կը լուան վայրի նարնջի հիւթով, այնուհետև անոր վրայ կը լեցնեն ճանդան փայտի փոշի, որ կարմիրի մօտ գոյն մը կու տայ մազին։ Տիկին մը, որ բաւական տարիներ հոն անցուց և որուն հանդէսի մը զբաժ մէկ յօդուածէն կ'առնենք այս տեղեկութիւնը, կ'ըսէ թէ անոնց մէջ երբեք ճաղատ մէկը չտեսաւ։ Անոնք շատ ձուկ կ'ուտեն, կենդանիի միս չեն ուտեր բաց ի խոզու միսէն, և չունին հաց

վրայ, և զանիկա անկրօն նաւապետ կոչեցին առանց առաջ գոհութիւն տալու ճաշելուն համար։ Այս պատկերը կը ներկայացնէ Սամուացոց պատերազմական մէկ պարը։ Անոնք տարօրինակ գաղափարներ ունին պատերազմի նկատմամբ։ Իրենց թշնամին յանկարծակիի չեն բերեր. այլ մէկ կողմը միւս կողմին կ'իմացնէ թէ պատերազմը երբ պիտի սկսի։ Իրենց մէջ չունին գինովցնող ըմպելիք, և որովհետև անոնք սպիտակամորթ երու այս մորթենէն զերծ են, շատ առողջ են հետևապէս, և բժիշկները կ'ըսեն թէ վերքեր, որոնք մահաբեր պիտի ըլլային ուրիշ շատերու, անոնց մէջ յաճախ կը բուժուին։ Յիշեալ տիկինը անոնց վրայով պատմած հետաքրքրաշարժ շատ բաներէն հատ մըն ալ յիշենք։ Իբրև պատուոյ նշան յոգնակի թուով կը խօսին անձի մը հետ, ինչպէս ընդհանուր սովորութիւն է այս երկրին մէջ։ Բայց կ'ըսեն, «Դուք երկուքդ» երբ կը խօսին մէկ անձի։ Օտարական մը որ ընտանի չէր անոնց այս ոճին, վերաւորուեցաւ երբ օր մը այդպէս խօսուեցաւ իրեն, մտածելով թէ անոնք «Դուք երկուքդ» ըսելով հասկցնել կ'ուզէին զինք և էլը որուն վրայ նստած էր ինք։

**ՄԵՑ ՀԱՅՐԻՆ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ**

Փոքրիկ Մարիամը կ'ուզէր իր կիրակնօրեայ դպրոցի դասը սորվիլ։ Շաբաթ իրիկուան դէմ էր և ժամանակը կ'անցնէր։ Վերջապէս անոր աւելի մեծ քոյրը Աստուածաշունչ մը առաւ պահանջէն և ըսաւ, «Եկուր, Մարիամ, քեզի օգնեմ որ սորվիս դասդ, և ետքը կրնաս երթալ խաղալու»։ Մարիամ իր քոյրը քով եկաւ իր դասը սկսելու պատրաստ, երբ յանկարծ ըսաւ, «Փոյրիկ, մեծ հայրին Աստուածաշունչն սորվիմ»։ «Բայց ի՞նչ տարբերութիւն կրնայ կենալ»։ «Մեծ հայրին Աստուածաշունչը քուկիսէդ աւելի շահեկան է»։ «Ո՛յ, Մարիամ, անոնք ճիշդ միևնոյն են»։ «Բայց ես իրօք կը կարծեմ թէ մեծ հայրին Աստուածաշունչը քուկիսէդ աւելի շահեկան ըլլալու է. մեծ հայրը քեզմէ շատ աւելի կը կարդայ»։ Կան շատ նորահասակ անձեր, որոնք

աղէկ կ'ընեն եթէ մեծ հայրին Աստուածաշնչին նային: Հաւանորէն եթէ խնամով քննեն զանիկա, անոր մէջ պիտի գտնեն բան մը զոր երբեք գրատած չըլլան իրենցին մէջ. և եթէ աղօթեն Սաղմոսերգունին պէս, «Բաց իմ՝ աչքերս որ քու օրէնքէդ հրաշքներ տեսնեմ», օրհնութիւն պիտի գտնեն Աստուծոյ խօսքին մէջ, զոր անկողի կարգացողներ երբեք չեն գտներ:



**ԱՐԵՒՈՒՏ ԱՆՁԵՐ**

Երբուհի կին մը պղտիկ հին տան մը մէջ կը բնակի, ուր զանիկա հանգիստ ընող քիչ բան կայ: Ինք գրեթէ խուլ է նաև շատ չկրնար տեսնել: Չեռքերն ու ոտքերը ամէն ալ անձեցած են և կը նեղուին յօդացաւէ: Բայց հակառակ բոլոր ատենց, անիկա առատ արևու լոյս ունի և զուարթ է Յունիսի այն թռչունին չափ որ կարմրալանջ կը կոչուի: Չեղի օգտակար կ'ըլլար եթէ տեսնէ իք զանիկա: Անգամ մը հասկցայ թէ ինչ է անոր զուարթ ըլլալուն պատճառը: «Երբ մանուկ էի», ըսաւ, «մայրս ամէն առաւօտ կը սորվեցնէր ինծի, անկողնէս ելելէ առաջ շնորհակալ ըլլալ Աստուծոյ ամէն մէկ բարիքի համար զոր կրնայի միտքս բերել թէ Ան ինծի տուած է — հանգըստաւէտ անկողնիս համար, ամէն մէկ հանգերծիս համար, նախաճաշիս համար, հաճելի տանս համար, բարեկամներուս համար և իմ վայելած բոլոր օրհնութիւններուս համար, զանոնք մէկիկ մէկիկ յիշելով — և այդ ժամանակէն ի վեր իմ ամէն մէկ օրս կը սկսիմ Աստուծոյ օրհնաբանութեամբ լեցուն սրտով մը բոլոր այն բաներուն համար զորոնք ինծի համար ըրած է Ան և կ'ընէ:»

Ռբրեմն հոս է երջանիկ կեանքի դաղտնիքը, այն է՝ օրհնաբանութեամբ լեցուն սիրտ ունենալ, և ընել ինչ որ այս սիրելի տիկինը կ'ընէ — այսինքն ամէն օր համբել մեր վայելած բարիքները, անոնց համար շնորհակալութեան հոգիով — և այն ատեն զԱստուած օրհնելու շատ պատճառներ պիտի գտնենք:



**ՇԱՆ ՄԸ ՅՈՒՂԱՐԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ ՍԲՐԵՆԱՊՊՈՒՍ ԱՊՈՍՏՈՒՆ ՄԵՋ**  
 Ըուն մըն էր լոկ, բայց շատ կեանքեր ազատեց, և երբ բուն իր կեանքը տուաւ ուրիշները ազատելու ջանացած ատենը, Սբ. Բեռնարդոսի Ապաստանին բարի վանականները թողեցին զանիկա պատուով:

Ճինէլլոս, Մայիս 24.  
 Այսօր Սբ. Բեռնարդոսի Ապաստանին վանականները յատուկ «Չքեզ Աստուած» մը երգեցին շան մը համար որ ամէնէն դեղեցիկ և ամէնէն քաջ Սբ. Բեռնարդոսեան շունն էր բոլոր կեանք ազատող ոյժերուն մէջ որ կը մաքառին Սլաւեան գագաթներուն յաւիտենական ձիւներուն և սոսկալի ցուրտին դէմ: «Չքեզ Աստուած» մը երգեցին դիւցազնի մը համար: Եւ երբ երգին վերջին խաղերը արձագանգ տուին և կորսուեցան լուծեան մէջ, իւրաքանչիւր քահանայ արցունքներ թափեց Պարիսի Ալպեանց այս մարտիրոսին, մարմնին վրայ: Եկեղեցւոյն դուրսի կողմը եղևնի ճիւղերէ շինուած կոշտ պատ դարակի մը վրայ — որ ծածկուած էր կակուղ սև ծածկոցով մը և կը հսկուէր երկու կնգաւոր վանականներէ — կը պառկէր շունը որ մեռած էր իր պարտքը կատարելու միջոցին: Անոր մարդկային եղբայրներէն ոչ մէկը երբեք մեռաւ աւելի ազնուաբար, վասն զի Պարիս մեռաւ որպէս զի երեք ճամբորդներ ապրէին: Ճամբորդները որոնց համար անիկա մեռաւ, այս յատուկ պաշտամունքին ներկայ գտնուեցան մատուռին մէջ, և երբ պաշտօնն աւարտեցաւ, բուն իրենց ձեռքերով օգնեցին զիրենք ազատելու համար մեռած կենդանիին թաղմանը:

Ասիկա պատշաճ պաշտօն մըն էր այս մեռած Սբ. Բեռնարդոսեան շան, որ երեւոյնքով կեանքեր ազատած էր: Այր և կին մարդիկ և տղաք, զորոնք ան աղատած էր ձիւներուն սպառնալիքներէն և լեռան պատառուածներու վտանգներէն, կ'օրհնեն այս անբան բարեկամին յիշատակը:



**ՆՈՐՈՐԻՆԱԿ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄԸ**  
 Բոլոր անոնք որ կը սիրեն թռչուններն ու կենդանիները, հաճոյքով պիտի լսեն նորօրինակ ցուցահանդէսի մը վրայ, որ անցեալները տեղի ունեցաւ փարիզ, փրթի փալէի մէջ, «Սնիսո Սրարածներու Պաշտպան» ընկերութեան ձեռքով: Ասիկա էր ցուցահանդէս մը պատկերներու, որոնք զծուած էին կենդանիներու և թռչուններու հանդէպ քաղցրութիւն արձարձելու նպատակաւ: Մրցանակներ խոստացուած են ընտիր պատկերներու համար, զորոնք ընկերութեան պիտի օրհնակէ, ապագրէ և թղթատարով պիտի գրէ երկրին ամէն

կողմերը: Յուցահանդէսին զրկուած պատկերներէն մէկը կը ներկայացըներ Գլոբուսի Զրեշտակը որ անգուրթ ձիւնապանի մը ձեռքը կ'արգելէր կենդանին շարժարեւ: Ուրիշ պատկեր մը կը ներկայացնէր իր չունէն առաջնորդուող կոյր կին մը: որ կուրծքին վրայ կը կրէր անխօս կենդանիներու դէմ անգլուծութիւնը դատապարտող կարճ գրութիւն մը:

**ԱԶԳՈՒՈՂ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ**

Ամէն հրապարակախօս, այսինքն բազմութեան մը անոյն խօսող անձ, զիտէ թէ ինչ օգնութիւն և ներշնչում կ'ընդունուի ազդուող ունկնդիրներէ: Եւ սակայն քիչ անգամ կը պատահի որ ունկնդիրներու հաճոյքը այնպէս ազատօրէն արտայայտուի ինչպէս դէպքի մը մէջ զոր թահուրս Բայքը կը պատմէ իր «Երբուհի Նուագաձուռի մը Յիշատակները» կոչուած գործին մէջ: Նուագաձուռներու տիկուները որոնց մէկն էր ինք, նուագահանդէս մը կու տար գրեթէ քառասուն տարի առաջ: Ունկնդիրներուն մէջ իբր տասներկու Ամերիկեան Հնգիկներ կային, որոնց մէկ քանին իրենց ցեղային տարազը հագած էին: Անոնք բոլորովին անշարժ նստան նուագաձուռեան միջոցին, իրենց դէմքերուն վրայ երբեք ազդուելու նշան չցուցնելով:

Վերջը, կը գրէ Սբ. Բայքը, խումբին մէջէն մէկը «Կարձեալ» ըսուած ատեն փոքրիկ կտոր մը նուագեց որ կը կոչուի «Երբուհի ծառին վրայ», և կը ներկայացնէ վայրի թռչունի մը փափուկ երգը անտառին մէջ: Այն վայրկեանին երբ ջութակահարը սկսաւ նուագել այս կտորը, Հնգիկները ողևորեցան, անոնց աչքերը փայլեցան, և իրար մտացին իրենց արմուկներով: Եւ երբ թռչունիկին մեղեցիկ և թռչունի երգելու նման նուծիւնը սկսաւ, առաստաղին և պատերուն ամէն կողմը նայեցան, ակնկալելով թէ թռչող երգիչ թռչուններ պիտի տեսնէին: Բան մը չտեսնելով, ջութակահարին վրայ նայեցան, և հասկցան թէ ան էր այդ ձայները հանողը: Ապշուածներ որ նկարուած էր ինութեան այս զաւակներուն գէմքերուն վրայ, հաղուադէպ տեսարան մըն էր ինքնին, վեր վար կը ցատկոտէին ճիշտ ինչպէս կ'ընեն փոքրիկ մանուկներ երբ անսովոր բանէ մը հաճոյք կը զգան:

Տարեկան բաժնետրգապի՛ն 6 դա՛մ. արժաթ կանիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտչեմարտ Ընկերութեան Կողմէն Արտօմատէր Զ. Բ. ԿԻՒՆ Տնօրէն — Կոնիկոյի 2 Վ. ՊԱՆՆԸՄ

**ԿՅՍՏԱՆԳԻՆՈՒՊՈՒԼԵՍ**  
 Ի յօ՞րհու՛ս ք՛ սպա՞ր օտօ՞ւսա՛ւ  
 Ե՛րևանէ՛ շը՛ր Ե՛րու՛ս: Ա՛մերիկան ի՛նչ